ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

«ԵՐԵՎԱՆԻ Ն.ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ2 ՊԵՏԱԿԱՆՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

«YEREVAN REGIONAL STATE COLLEGE N2 NAMED AFTER N. ATCHEMYAN» SNPO

«ЕРЕВАНСКИЙ РЕГИОНАЛЬНЫЙ ГОСУДАРСТВЕННЫЙ КОЛЛЕДЖ N2 ИМЕНИ Н. АЧЕМЯНА» ГНКО

0062,ք. Երևան, Մոլդովական 37ա, Հեռ./Tel./Тел. +374 10 672301, 672790, Էլ. փոստ/E-mail/Элпочта: collegn2@mail.ru, c. Yerevan, Moldovakan 37a, 0062, г. Ереван, Молдавакан 37а, 0062

N106 «27» օգոստոսի 2024թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԿԻՆ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հարգարժան տիկին նախարար,

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանի պահանջներով տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Ն. Աճեմյանի անվան թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում առկա են մանկավարժների թափուր աշխատատեղեր.

- Հանրակրթական առարկա՝ Ֆիզկուլտուրա 320 ժամ, դասավանդող դասախոս:

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները.

• մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

- Մասնագիտական առարկաների մոդուլներ դասավանդող դասախոսներ՝

1. «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության («Ֆինանսական մաթեմատիկա» (108 ժամ), «Ծախսումների հաշվառում» (72 ժամ), «Ֆինանսական գործիքներ, փոխառու միջոցներ և պետական շնորհներ» (108 ժամ)):
2. «Սպասարկման կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության («Տուրիզմի ինդուստրիա» (72 ժամ)):
3. «Կոսմետոլոգիա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության («Մաշկ և վարակիչ հիվանդություններ» (54 ժամ), «Սանիտարիա և հիգիենայի պահպանում» (54 ժամ)):

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները.

- դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն ՀՀ-ում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

➢ Արտադրական ուսուցման վարպետներ՝

1. «Խոհարարական գործ» մասնագիտության 1 վարպետ (1 դրույք),
2. «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության 1 վարպետ (1 դրույք):

- Մրցույթին կարող են մասնակցել համապատասխան մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ և մասնագիտական կրթություն ունեցող անձիք:

Տնօրենի պարտականությունները կատարող՝ Լ. Թավաքալյան